


ԲԱԺՆԵԿԻՆ

Ի Պուրկարիս
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 տոլ. 30 սենդ

ԿԱՆԻՒԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՀԱՆՂԵՍ ԱԶԳՍԵՐՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե. ՏԱՐԻ

ՆԵՊՏ. 8 ՇԱԲԱԹ 1901

ԹԻԻ 223

ԱԶԳԱՅԻՆ

ՏՕԲԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Նիւ Եորքէն հետեւեալը կը գրեն Արեւելի.

«Մեր ամենուս ծանօթ Պուրկարի հմուտ և ազնիւ բժիշկ Տիար Տօքթ. Յովհաննէս Արշակունի, որ տասը տարիներէ ի վեր Նիւ Եորք հաստատուած է, այս անգամ բժշկական աշխարհին նուիրեց բժշկական հրատարակութիւն մը, որուն ունեցած մեծ կարևորութիւնը կարի գովեստով կը շեշտեն թերթերը. Ազնիւ Տօքթորը մեծ յաջողութեամբ Անգլիէի բէնի թարգմանեց Բիէն. ժուսէի, Ֆրանսացի հոշակաւոր հեղինակ բժշկին (Բրէյդայս օվ Մէսէսիւն) անուն նշանաւոր մէկ գործը, աւելցնելով իր կողմէն 10 երկար տարիներու փորձառութենէն քաղուած յաւելումներ որոնք մէծ կշիռ ու կարևորութիւն ունին:

Տօքթ. Բիէն. ժուսէ, այս երկը Տօքթ. Արշակունիի խնդրանաց վրայ յատկապէս գրած է և այս վերջինն ալ ձեռագրէն թարգմանած: Գիրքը 1200 լայնածաւալ երեսներէ կը բաղկանայ Ամէն ծանօթ հիւանդութիւն զատէն ուսումնասիրած է, ներկայացուած են իւրաքանչիւրին ծագումը, ախտանշանը, բացատրութիւնները, դարմանումը և առողջացման եղանակը: Բժշկական թերթերու քննադատութեանց յենլով 20րդ դարուս կատարելագործեալ բժշկարանն է: Համակրելի Տօքթորը իր բժշկական կարևոր յօդուածներով և ատենախօսութիւններով վերջին

տարիներս մեծ անուն և տեղ գրաւեց Ամերիկեան բժշկութեան մէջ:

(Զերմագինս շնորհաւորելով մեր համակրելի բարեկամ ազնիւ Տօքթոր Յ. Արշակունին իր այս հոյակապ յաջողութեանը համար որ մեծ պատիւ կը բերէ թէ իրեն և թէ իր պատկանած ազգին, առ այս շարժազանց ուրախութիւնն իս կը յայտնենք):

Պուրկարէն մեզ կը գրեն.

«Ազգային գործերը անկերպարան վիճակի մէջ են. վարժարանը փակ է. ուսուցիչ չկայ. այդ մասին մտածող ալ չկայ: Հիմա ալ քահանայի կուր կայ: Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի որ անցեալ տարի տեղւոյս եկեղեցին փակ ձգելով յանկարծ քաղքէս մեկնած ու գայթակղութիւն պատճառած էր, վերջերս դարձեալ հոս բուսաւ: Եկածին պէս սկսաւ սրճարանները ու ամէն ծախածուկ մոտենլ և իրեն կուսակիցներ ճարել, ժողովուրդին ըսելով թէ «զիս թաղականութիւնը բերած է», թաղականութեան ալ ըսելով թէ «զիս ժողովուրդը կանչած է»:

Այս պատճառաւ հանրագրութիւններ ալ եղան և թաղականութեան ներկայացուեցան. Տէր Գարեգինի կողմնակիցները կուզեն հրաժարեցնել Տ. Կարապետը, այս վերջինը ու իրեն կուսակիցք ալ կը պնդեն թէ մինչև որ Պատրիարքարանը և Այցելու հովիւը չի հրաժարեցնեն, (որոնց կողմէ զրկուած է Տ. Կարապետ) պիտի շարունակէ իր պաշտօնը:

Քահանայական այս կռիւին պատճառաւ տեղւոյս ժողովուրդը խռոված ու երկպառակած է, որուն հետեւանքը չէ կարելի նախատեսել»:

(Այս շաբթու Պոլսէն առնուած թերթերէն կը տեղեկանանք թէ, Կրօն. ժողովը որոշեր է իմացնել Տ. Յարեգին քահանային որ իրաւունք չունի Պուրկազի մէջ քահանայագործութիւն ընելու, այլ պարտաւոր է անմիջապէս Աթենք վերադառնալ:

—Հանգուցեալ յոյն բարերար Բօլ Սթէֆանովիչ՝ 300 օսմ. ոսկի կտակեր է Պոլսոյ մեր Ազգ. Հիւանդանոցին:

—Երուսաղէմ Բոպպէի ճամբուն վրայ՝ Վանքին Մեծ-արտը ըսուած հողին վրայ—որ քաղքին ամենէն լայնարձակ ու բանուկ պողոտան է—Ամեն, Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը անցեալ տարուընէ ի վեր իր ծախքով Ս. Յակոբեանց մայրավանքին համար նորանոր շէնքեր կառուցանել կուտար: Այս շէնքերուն՝ որ տասնի չափ մեծ կակ կալուածներ են, այս օրերս լրացած ըլլալը Երուսաղէմէն կը գրեն: Սոյն նոր շէնքերուն համար ստառած գումարը երեք հազար ոսկիէն աւելի կը գնահատեն:

Այս կալուածները բուական հասութարեր են, և փառապսակը կը կաղմեն Երուսաղէմա Ս. Պատրիարքին, որ Աթոռը բարձրանալէն ի վեր շարունակ իր ունեցածները ծախսելով, յօգուտ Աթոռին, զանազան կալուածներ կը կառուցանէ:

Փափաքելի է որ մեր կղերականութեան կուսակրօն կարգին ունեւոր մասը Տ. Յարութիւն և այլ Սրբազաններու բարի օրինակին հետեւելով, ազգէն առածնին դարձեալ ազգին վերադարձնեն ու յաւէրթանան:

—Անցեալ յուլիս 17ին Մոսկուայի հայոց եկեղեցիին մէջ հոգեհանգստի պաշտօն կատարուեր է որբերու պաշտպան Գ. Զանչեանի մահուան տարեդարձին առթիւ: Բացի հալերէն շատ մը ռուս նշանաւոր անձնաւորութիւններ փութացած են իրենց ներկայութեամբը յարգել հանգուցեալին յիշատակը, ինչպէս մամուլի ներկայացուցիչներ, իրաւագէտներ ևն: Ճառեր արտասանած են Էմմանուէլ քահանայ Նազարեանց և երիտասարդ բանաստեղծ Ա. Մատուրեան, որոնք որտառուչ կերպով պատկերացուցած են Զանչեանի մատուցած ծառայութիւնները Հայ ազգին:

Գերեզմանին վրայ երկու պատկերներ դր-

ուած են, մին՝ Մոսկուայի Հայ հասարակութեան կողմէ «Զրկուածներու բարեկամին», միւսը՝ հանգուցելոյն մտերիմ բարեկամ Ստօլպովսկի կողմէ իր «Թանկագին ընկերին»:

ԲԱՅ ՆՊԱՄԱԿ

«Իրաւունք»ի խմբագրութեան

Ատենէ մը ի վեր թերթիդ սիւնակները կը լեցնեն Տ. Էլմասեան անուն անձի մը յօդուածները որոնք իրենց անլի ու տաղտկացուցիչ հանգամանքովը Դէս ու Դէնի խոհուն յօդուածներուն ձգած տպաւորութիւնները կը չեղսքացնեն: Ուստի իբրեւ անկեղծ բարեկամ Ձեր թերթին, կը փափագինք որ տնօրէնութիւն մը ընէք, ազատելու համար զմեզ Տ. Էլմասեանի անհամ և ձանձրացուցիչ յօդուածները կարգալէ:

Ընթերցող մը

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

Թասրոն Սանդրալ

«Վէսէլօ» Հայ գերասանակտն խումբը որ երեքշաբթի օրը Ռուսճուքէն Վառնա եկած էր, հինգշաբթի գիշեր իր առաջին ներկայացումը տուաւ Սանդրալի թատերաւորահին մէջ: Նոյն գիշերը մեծաւ մասամբ քողաքիս բարձր դառուն պատկանող երկսեռ թատերասիրաց հոծ բազմութիւն մը Վէսէլօ խումբին բարի գալուստ մաղթելու եկած էին, ու շատեր Պ. Պէնլեանի ու Պ. Պապանեանի ձեռքերը սեղմելով՝ խումբին վերադարձին առթիւ իրենց դոհունակութիւնը կը յայտնէին:

Նոյն գիշերու ան թէ՛ բանտօրիմը, թէ՛ կատակախաղը և թէ՛ տուէթները հանդիսականաց կողմէ շեմապէս ծափահարուեցան:

Վէսէլօ խումբը որ այս անգամ աւելի կալմակերպուած է նոր ուժերով, այժմէն գուշակել կուտայ մեզի թէ թատերական լաւ շրջան մը պիտի բոլորենք յառաջիկայ ձմեռ:

ԹԻՒ 25 ԱԹՈՒ

Թատրոն Պորիս

(Տ. և Տիկին Յակոբեաններու նպաստը)

Գեղին սփռուսի վրայ ապագրուած բրոկրամ մը այս հինգշաբթի գիշեր զմեզ թատրոն Պորիս կը հրաւիրէր։ Թատրոնի արտաքին կողմը վայելչորէն զարգարուած ու լուսատրուած էր։ Տիկին Յակոբեան՝ հանգիսականները կը պաշտօնասիրէր ծաղիկներով և անուշահոտ հեղուկներով։ Մտանք սրահը ուր բազմութիւնը լցուած էր անհանգիստ ըլլալու աստիճան։ Բանտամիմը Ռոմէօ Փիլիէթն էր և գերակատարը լաւ ներկայացուցին։ Երգերէ ու պարերէ վերջը «Որդեսպան հօր» տրամի արարուածը բացուեցաւ։ աղքատիկ տնակ մը ուր այր և կին վերջին ծայր չքաւու լծեալք կը տառապին։ Իրենց յոյսը դրած են բազմատոմսի մը վրայ երբ ցարդէն սառած մանկիկը կրակաբանը վառելու նպատակաւ բազմատոմսը պարզ թուղթ գիտնալով կայրէր։ մինչ նոյն պահուն նոտարը իմաց կուտար որ բազմատոմսը 500,000 ֆրանք չահած է։ այր և կին շուտահառու թիւնը սոսկալի է։ հայրը ինքզինքը կորսնցուցած կըսպաննէ զաւակը և անմիջապէս ետքը ինքզինքը կը խեղդէ։ Այր և կին զերեւուն մէջ Յակոբեանները շատ աղւոր ներկայացնելով ծափահարութեանց արժանացան ու իբր նուէր ընդունեցին ոսկի ժամացոյց մը և մետաքսեայ թաշկինակ մը։

Տրամէն յաւելալ հանգիսականք՝ պիտիւելու փափագով գումէտիին կապասէին, և ահա վարագոյրը բացուեցաւ, երգեցիկ խումբ, փառաւոր հագուստ բայց դժբախտաբար առ հասարակ զէշ ներկայացնելով խաղին արժանիքը նսեմացուցին։ Երգեցիկներուն զգուշի գոչիւնը, երաժշտաց խաչոտ հնչիւնը, գերասանաց անիմաստ խօսքերը և անճոռնի դարձուածքները չկրցան գոհացնել թատերասէր ժողովուրդը, կրնանք ըսել թէ ուրախ եկան ու դժգոհ մեկնեալն։

Անկեղծօրէն կըսենք թէ ասանկ անախորժ գումէտիաներու հետ գործելը Յակոբեաններու համար պատուաբեր չկրնար ըլլալ։ Ասկէց զատ, նպաստի իրիկուններ կանխահոգ միջոցներ ձեռք առնելու է, նստարանները թուաւոր ըլլալու են ու սրահին պարունակելիք քանակութենէն աւելի տոմսակ ծախուելու չեն որ հրաւիրեալները զիրար նեղելով անհանգիստ չըլլան։ նաև ներկայացումները բրոկրամներու մէջ տրուած փայլուն խոտաններուն համեմատ ըլլալու են, որպէս զի հրաւիրեալք գոհ մեկնին։

ՍԵՐԵ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Գահիրէ 4 Սեպտեմբեր 1901

Փարոսի առաջին տարեշրջանի վերջին 101րդ թիւին մէջ, 28 Մայիս 1898, խմբագրութիւնս կըսէր՝

«Յառաջիկային վերապահելով Փարոսի մէկ տարուան մէջ կատարած բարոյական գերին վրայ խօսիլ, «կը փութանք յայտարարել որ Փարոսի երկրորդ տարեշրջանը սկսելէ առաջ՝ հիմնական ինչ ինչ կարգադրութիւններ անհրաժեշտ ըլլալուն, ստիպուած ենք «ժամանակ մը դադրեցնել անոր հրատարակութիւնը»։ «այդ ժամանակամիջոցին մէջ պէտք եղած միջոցները «ձեռք առնելով ապահովեցնելու համար—եթէ երբեք «կարելի է—Եգիպտոսի այդ միակ թերթին կանոնաւոր «հրատարակութիւնը»։

Այսօր ուրախ ենք կարենալ աւետելու մեր կգիպտաբնակ սիրելի ազգայիններուն թէ երբ տարիէ վերջ, իրագործուած կը տեսնենք մեր փափաքը որով կարելի կըլլայ մեզի վերադառն սկսիլ Փարոսի երկրորդ շրջանի հրատարակութեան՝ շնորհիւ այն թանկագին աջակցութեան զոր մեզ զննծայեն մեր բարեկամները, մեր գործին համակրողները և ամեն անոնք որոնք իսկապէս իր նպատակին ծառայող թերթի մը վերեւան ցանկացող են։

Մեր առաջին թուոյն վերապահելով խօսիլ այն ամեն կարգադրութիւններու վրայ որոնք այս անգամ հիմնական, կանոնաւոր եւ փայլուն պիտի ընեն մեր թերթին վերերեւոյթը, ներկայիս պատիւն ունինք ծանուցանել թէ Փարոսի Բ. տարեշրջանի առաջին թիւը հրապարակ պիտի ելլէ յառաջիկայ Սեպտեմբեր 19ին 1901 եւ պիտի հրատարակուի շաբաթը երեք անգամ, երեքշաբթի, Հինգշաբթի և Շաբաթ օրերը, նախկինէն աւելի մեծ ծաւալով եւ Եգիպտոսի ու արտասահմանի լաւագոյն գրիչներու աշխատակցութեամբ։

Յուսալով որ պիտի հաճիք ձեր համակրութեամբ բաշխուել մեր այս նոր ձեռնարկը հաճեցէք ընդունիլ Տ. . . մեր յարգանաց հաւաստին։

Հիմնադիր—Տնօրէն

Փարոս լրագրի

Յ. ԱԼՓԻԱՐ

Հետեւեալ գրքերը կը ծախուին Ա. Զարպհանէլեան գրատունը.

Բնաշխարհիկ բառարան Ա. պրակ	4 ֆր
" " Բ. "	4 "
" " Գ. "	4 "
Գրպանի ատլազ	4 "
Բառար. գործնական գիտութեան	4 "

Համակրելին յանգագէտ—բանաստեղծ Տիար Ալ-
փաշան՝ ի նպատակ. Պոլսոյ Ազգային Հիւանդանո-
ցի տրուած Քօնստնտին անթիւ «Թէ ինչո՞ւ չեմ ամուս-
նանար» վերնագրով ոտանաւոր մը պատրաստած էր .
սոյն գործը որ միմիայն ուրազի պէս իրենց կողմը առ-
չելով ամուսնանալէ փոխշող արդի երիտասարդաց գա-
ղափարի ճշգրիտ պատկերը կը ներկայացնէ, այսինքն
անոնց սրտէն կը խօսի, այս անգամ ձեռքերնիս անցած
ըլլալով, հաճութեամբ կը հրատարակենք:

ԹԵ ԻՆՉՈՒ ՉԵՍ ԱՄՈՒՍՆԱՆԱՐ

—o—

Ահ, եթէ երբէք ամուսնանամ ես,
Կուզեմ աղջկան մ' հոգւոյն և անձին
Սիրահար ըլլալ, բո՛ւռն, յիմարի պէս,
Որ բոլոր աշխարհք վրայ, նախանձին,
Ետքն ալ, սիրտս անգորր իր վարուց մասին,
Միշտ հաւատարիմ, աղնիւ ու խոնարհ,
Կուզեմ ըլլալ մի տիպար ամուսին...
—Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

Անշուշտ գոյութիւն ունի՝ անիկայ,
Էական ոյր վըրայ կ'երազեմ յաւէտ.
Հրեշտակն, յոյսերուս անո՛ւշ տուարկայ,
Որ պիտի տոյ ինձ կեանք մ'երանաւէտ:
Ո՛ր է պաշտելի դիցուհին չքնաղ,
Որ լուսաւորէ իմ հորիզոնն յար...
Իտէա՛լ կնո՞յ կը դանկամ, աւա՛ղ...
—Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

Չեմ ուզեր ես կին պննասէր թեթեւ,
Ո՛չ ալ փափկակազմ շըլախտաւոր կին,
Որ փայլ, արդուզարգ խորհի յարատեւ,
Կամ զիս հարկատու ընէ... բըժիշկին.
Չեմ ուզեր կին շատ ուսեալ, յաջողակ,
Որ ինձ դաս տալու գտնէ միշտ հնար,
Ոչ ալ շատախօս կին, —էգ կաշաղակ...
—Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

Ամբողջ կեանքիս մէջ, կ'ուզեմ շարունակ
Որ անձիս վրայ ես իշխեմ ինքնագլուխ.
Գուրս ելլեմ՝ կամքիս ուզած ժամանակ,
Տուն դառնամ՝ նոյնպէս՝ շատ ու չկամ կա-
նուխ,
Բանամ կամ գոցեմ պատուհան կամ դուռ,
Գընեմ կամ ծախեմ իմ դատածս յարմար,
Մէկ խօսք, իմ տէրս ես ըլլամ, կուշտու կուռ,
—Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

Ես կ'ուզեմ կինն այն շընորհազարդ,
Գտնէ զիս բարի, կրթեալ, գեղանի,

Նուրբ, բարձր, հանճարեղ, ըսքանչելի մարդ,
Եւ այնպէս ըլլալ հոգւով դաւանի.
Քրմահաճոյքներս ի՛նչ ըլլան բոլոր,
Ինձ համակարծիք միշտ և անգաղար.
Ըրած, թողածիս հաւնի անմոլոր...
—Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

Ոչ նախտնձոտ եմ ես, ո՛չ ալ դաժան,
Բայց թաղ, մը մէջ լռին, ամայի,
Կուզեմ տուն վարձել պարզուկ և ժա՛ն
Որ կինս, ինէ՛ զատ մարդու չը՛նայի...
Չուզէ կառք, նաւակ, թատրոն ու հանդէս,
Ո՛չ ալ երեկոյթ, պար, երգ ու քնար,
Կի՛նս անմեղ ըլլայ... պատկերի մը պէս...
—Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

Ի՛նչ գտնեմ կին մ'որ կարենայ բաւել
Մաքրել, սրբելու մինչև բակը տան...
Կերակուր, լուացք, արգուկ և աւել
Ինքն ընէ՛ նոյնպէս՝ կար ու... կարկրան,
Եւ իրիկուան՝ դէմս ելլէ միշտ ժպտուն,
Երբ ննջեմ, հսկէ անկողնոյս սընար,
Եւ հագուեցունէ՛ զիս առաւօտուն...
—Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

Փեռացու մ'եմ ես — ոչ խըստապահանջ—
Բարեմիտ, համեստ և առաքինի...
Բայց չեմ հանգուրժեք աներ ու զոքանչ,
Ոչ ալ մօրաքոյր, աներձագ քենի...
Ամուրի մեռնիլ չէ իմ նպատակ,
Ազնիկ մը կ'ուզեմ թարմ սիրուն, խոնարհ,
Եւ հետն ալ... հինգ տասն հազար տկի ստակ...
—Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

ԱՓԵՍՏԱՆ

ԵՐԱԶԱԿԱՆ

—o—

ԽՐԾԱԾ ՄՈՎԿԻՄԻՆ ԱՎՕԴԱԹԸ

Փ. Պոլիս

Անցեալ գիշեր երազիմ մէջ տեսայ երկու տի-
կիններ որոնք եկեղեցիին վերնաստունը թող քո-
վի նստած, այն միջոցին՝ երբ դպրապետը ճա-
շու գիրքը կը կարդար, հետեւեալ խօսակցու-
թիւնը կընէին.

—Ինձի նայէ հանրմ, քեզի պան մը պիտի
ըսեմ ամա, շիտակը պիտի զրուցես: Անցածնե-
րը իմացայ նէ դիտես քի տունը թէփէիս թէքս
տառձաւ. դուն ի՞նչ հախ ունիս իմ քրքածիս
համար տնանկ առկոց առակ խօսքեր ըսելու:

պերնիդ և կածք եալան եալնիշ թող տուերես, քելի կը վայլէ՞. խողը վայրդ տուաւ:

— Բա քիրածիդ ո՞վ է, դուն ո՞վ էս. նէ քեզ կը ճանչնամ նէ ալ քերածիդ. ո՞վ ըլլալդ մէյ մը հասկցուր տէ ետքը խորաթվիւք:

— Հըմ, չի ճանչնալու կը զարնես կոր. իշթէ ես վայլոյ սարաֆիներու ճինսէն Ռոզիկ հանրմը չեմ. քիրածիս ալ խըրսագալեան Մովկիմ աղան չէ՞:

— Հա, տա խոֆածին համար կըսես կէր. քա ամա ինչո՞ւ ինծի պան կըսես կոր. պիւթիւն հալխուն պերանն է քի աղ մարդը ծածուկ սա- տանայ է եղեր. տունները հանդպցունելիք մարդ չէ եղեր. տահա առջի օրը կնքամօրս տունը վայր տուեր են քի վատնուն տարու մարդ էլեր 15 տարու աղջիկ ուղեր է. զահէր պէշիկը պիտի օ- րեր լոխմամը չօծուխին. կը վայլէ՞ իրեն:

— Ո՞վ րսեր է քի 60 տարու է տէյի. ըլլայ ըլլայ անճախ 55-56. հէմ ինչ կըլլայ. հիշ չէ՞ եղեր իծծուն տարու մարդ քի տառնըհինգ տա- րու աղջիկ առնէ. հէմ ինքը ամեն հեզ կըսէ քի Աստուած հրաման ըրեր է Գաւթի մարգարէին քի տօխսունը հինգ տարու եղած ատենը 14 տա- րու աղջիկ առնէ. մէյէր մարդուն սաղոթանը բէք ֆայտալը պան է եղեր. էրէկուան ճահի- ներէն խլէզ մը առնէ տէ ինչ պիտի ընէ. առանկ անլման մարդը առնողը օրլուս կը տեսնայ: Գա- նի վրան կը նայիմ նէ պերնիս ճուրիը կը վալէ:

— Կուրծքիդ սիւնկէր մը կապէ քի վար չի վալէ:

— Էս ալ էրիկ ունիմ ամա, իմինս վո՛ւր ան վո՛ւր. անոր հալը պաշխա է. տէնիզ տէրեա ուս- մունք կիտէ. օխտը լեզու կը գրէ կը խօրաթէ- ան պապի կազինօն նստի տէ տալեանճա, ֆրանկ- սըզճա, ինկիլիզճէ, հոռոմճա զաղէթաները ծառ- քը քիպար քիպար չի կարթար, պոյը սիրեմ, բա- շա կըլմանի. մէկ ֆէսը պակաս է գլուխը. հէմ պիւթիւն ուղատան մարդոց հետ կը խօրաթէ: Տունէ մը ներս մտած ատենը փեռացուր պէս խը- ղը խըզը կը կարմրի. պերնէն ալ չէքէր կը վալէ. Անցած տարի ժառանգը կերթար կընըս- տեր տէ պիւթիւն էթրաֆը քաղքին պիւքէլանե- րը կառնէին. կազինօններուն կառսօնները գի- մայը չափրատտ սէլամ կը կայնէին: Էթրաֆին- ները իգրամին մէջ կը խղզէր Ասանկ մարդուն էլեր չէք ամչնար պան կըսէք. դուք անոր պէս էրիկ մարդ մը ունիք. ամեն մարդ մայիլ էգած պէրնէն վար կը կախուի:

— Ատ ինչ խուզէթի տուտախ ունի եղեր քի կախուողը վար չիյնար կոր:

— Փամիլեաի մը մէջ մօնայ նէ մենծ պա- տիւ կընէ. ինծի պապի ընտանիք միսաֆիր գայ նէ ինչ ընելը, ինտօր պատուելը չգիտնար. մենծերուն ծառքը կը օրլամէ, պզտիկներուն է-

րեսն ալ էրկու մատովը մախաւալիշ կընէ տէ կը պագնէ, հալ խաթըր կը հարցունէ. մինչեւ եր- թան նէ լողերնին կը նստի, խօսք կընէ, էյ- լէնտիւրմիշ կընէ. մարդ չե՞նք մի. քիշ մը հի- ւընդնաս նէ իրար կանցնի, իլաճ կընէ. հէքի- մութենէ ալ կը հասկնայ. շատ քիպար մարդ է. առտունները օտան կաւիւր ու եաթախը կը շրտ- կեմ տէյի հազար հեզ շատ շնորհալալ եմ Ռո- ղիկ հանրմ. վախ օր խըլմէթ չգիտցույ մարդու ծառք էս ինկեր կըսէ: Չաթը աս աշխարքիս մէջ աղէկ մարդը տեղ չունի, շարութենէն ինչ ընել- նին չիյտեն. Հիմա քեզի խրատ մը տամ, մէյ մըն ալ ատանկ բաներ չի խորաթէք աս մար- դուն համար. խըրսլանմիշ ըլլայ նէ ամենուն ալ հախէն կուգայ, ետքը չեմ խառնուիր:

— Անցաւ, ալօգաթի հանրմ, չէ նէ տահա ը- սելիք ունիս. մինակ քու մէթ ընելներդ բա- րա մը չընէր, ինչո՞ւ պաշխասներուն համար ա- սանկ բաներ չեն ըսեր կոր. աս վուր էրթայ նէ սուլուլանմիշ կըլլայ. զէվզէկ բաներ կընէ ինքը զինքը հալխուն բերանը կը ձգէ կոր. հիշ իր տարիքին չի վայլելիք բաներ կընէ կոր. աշըգ- քէնտին քէօր սանըր տէօրթ եանը տուվար սա- նըր, իր ըրածները աշքին չերեար կոր ամա, էլ ուշաղը իյնէ տէլիինտէն հինտիւթանը կէօրիւ- եօր. քուկին ու քեզիպէսներուն ալօգաթուլթի- նը բարա մը չընէր, նաֆիլէ մի պատուտուիր, պիր ատամըն ատը չըգաճաւնա՞ կէօղիւ չըգաս տահա էյի տիրկըսն, սա ալ ըսեմ քի...

(Այս միջոցին ճաշու գրքին ընթերցումը ա- ւարտեր ու դպրաց միաբերան «ալէլուիա» ալէ- լուիա» պոռալու ձայնէն ընդօստ արթնցայ:

ՉԱՄԷՆ

ՉՈՒԱՐ ԶԱԼԻՔ

Կալուս աղան օր մը ցորնիկ ատեն յանկարծ տուն կը վերագառնայ և առանց դրանը զար- նելու կնոջը ննջասենեակը կը մտնէ:

Աստուած իմ, ինչ ահռելի տեսարան... տիկինը այնպիսի բազուկներու մէջ կը գտնուի որ ոչ ամուսնոյնն են և ոչ ալ... թիկնաթուղիներ:

Թորքերուն և կոկորդին ամբողջ ուժովը և ա- հտընկ չեշտով մը զոր ատանկ պարագաներու կը վերապահեն խաբսւած էրիկները

— Զի խպնած, անամօթ, հիմա, շո՛ւտ ելն. կը սկսի պոռալ:

Կինը. — Օտքդ պագնեմ, Կալուս աղա, ա- տանկ ալազ ալազ մի պոռար, հիշ տէյիլ իսէ սա եապանծի մարդէն խպնէ:

քապիօ

Փ.

ՅԵՐԱՅԻԻ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Վառնա

Թաւերական հրապարակ

Շաբթուս քաղաքս հասաւ երկու վազոն դե-
րասան ու դերասանուհի, որով հրապարակիս վը-
րայ գտնուած ապրանքին գումարը կը հասնի
100ի, թող զեամախս, զչալըճիս և զամաթէօս
այլովքն հանդերձ:

Ահաւասիկ ցանկը.

Վէսէյօ խումբ	20	հոգի
Վառիէթէ "	22	"
Սիւք "	23	"
Լիւրա "	17	"
Զօլուխչոճուխի խումբ	20	"
Սարկապուրկա խմբին տէօքքիւն-		
թիւներէն մնացած	8	"
	100	

Աստուած կարողութիւն ապ Վառնային որ
այ մարդոցը պօլ պօլ մեհաւ հասկցնէ:

Բաֆէ Բիկօլէթթօ

Անկուտիարար թատրոն գացող ազգային
մականուանեալներուն ուրախութիւնը աննկա-
րագրելի է: «Ո՞ր մէկուն պիտի հասնինք» ըսե-
լով կը ցատկոտեն կոր:

Պալըզ քաղաք

Մեր Մ. Տիեզերասատը հիանալի գաղափար
մը յղացաւ. լսելով որ տեղ մը յոյները պարի
դաս կառնեն, Փոլոսքիք շունչը հոն առաւ և
իր սքանչելի ընկերանսական շարժումներովը
ուսուցչին ներկայացած՝ պար սորվելու ունեցած
փափաքն յայտնեց: Պ. Ասուրցիչը վերէն վարզայն
աչքէ անցունելէ ետքը սանկ պատասխանեց.

— Բոլորովին աւելորդ կը դատեմ ես ձեզի:
համար պարի դաս առնելը, ըստ որում դուք ար-
դէն լաւ ցատկոտող մըն էք, այսինքն պարելու
ամեն ձեւին ու շարժումներին մօտեցն էք:

Մ. Տիեզերասատ՝ իրեն եղած այս չափէ
դուրս յարգանքին համար բոլորովին շուարած՝
միևնոյն հիանալի շարժումներով քանի մը քայլ
դէպի ետ թօրնխարան-իդէն երթալէն ետքը՝ Վայ
ոօք թռաւ . . .

Բէքին

Զինաստանի կողմէ իւր պատերազմական տու-
գանք եւ րոպայի վճարելի հինգ միլիառ ֆրան-
քը՝ վառնայի թերթերէն մէկուն փոխադրագրին
շնորհիւ Մէկ ՈՒ Կէ՞Յ ՄԻԼԻՈՆԻ իջաւ:

Պուզրէշ

Տաօը սեղան

Բաշարիչիշիականները իրենց խաղանէն թըթ-
ուած մը հանելով բերին ազոտոտ տեղ մը կախե-
ցին:

Պրակատիր

Ընթերցարանի վարչութեան տխրահաշակ
անդամներէն մին՝ աւաղակապետ Պանիէլին օրի-
նակին՝ Ետեւելով չի հրաժարիր. հակառակ իր
վրայ ծանրացած անմարբելի ազոտոտութեանց և
հակառակ անդամաց մեծամասնութեան պահանջ-
մանց:

Բոժ. — «Ութանմաղ տա ալլահըն զուլու
տըր» կըսէ առածը:

Փարտէն Լիւր

Թագաւորի դերը կատարող դերասան մը՝
չուրջը գտնուողներուն լիաբուռն ոսկի բաժնելէ
ետքը երբ վարագոյրը գոցուելով ներս գնաց,
իր ընկերացը մէկէն սիկարացու մը քիթիւն ու-
ղեց. առ այս ընկերը պաղարեամբ պատասխա-
նեց.

— Պրէ գարտաս, սիմտի իցէռտէ գրալ օլ-
մուս օթէքինէ պէրիքինէ ալուժ ըլա լիւրա տա-
ղըտիտօր խտին, պիրբաքէթ վըզը—սէրթ ալմագ
իցուն նէյ, 40 բտրա ալըդօյմատին:

Վամչաթքա

Արտասահմանեան թերթի մը տաճկերէն
բաժնին համար թուրքա-թաթարա-ոնկոլերէնէ
տեղեակ յօկօյ (օգնական) խմբագիր մը կը փըն-
տուի: Երբեք մասնագիտութիւնը պէտք է ըլ-
լայ իր գրածը . . . ինք անգամ չի հասկնալ.

Վճարում դոհացուցիչ. օրը տաս փութայի խա-
պախի կուտ:

Սանդրալ

Երէկ Կիշեր Սանդրալի թաանրասրահը այն
աստիճան բազմութիւն կար որ շատեր ոտքի վը-
րայ մնացած, իսկ վերնատունը գտնուողները ի-
րարու շալակ ելած հանդիսատես եղան:

ՀԱՃԻ ԲԱՆԱԳՕ

յօդուածին շարունակութիւնը յաջորդով:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (30)

ՌԵՆԷ ՏՐԻՓՆԻՔ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԺԱՐ-ՄԱՄՈՒՅԸ)

Կղեռնադատ ատենի առջև ներկայացող ամբաստանեալները յանցաւորները չեն:

—Ուրեմն իրաւ է որ Մէնկ նախագահը երկու անմեղներ դատաւարտելու անմոռութիւնն ըրած է:

Իր ընթացքին համար եղած այս արձակ համարձակ դիտողութիւնը մարդու մը կողմէ զոր կը կարծեր թէ կրնայ բանտ լրկել, խոշոր դատաւորը քիչ մնաց որ ինքզինքը մատնէ. բայց քո—Հոր, որ ապահով չէր թէ Սանկ ճանչցած ըլլայ իր պաշտօնակիցը, ժամանակին կեցուց զայն և պատասխանեց.

—Այո, ատենին նախագահը սխալեցաւ. բայց այսօր գիտենք ճշմարիտ մարդասպանին ով ըլլալը: Չուն է, ժամանակով մտաւաճառ ի ֆուն—սի:

—Իրաւ: Աւելի աղէկ տիկին Լինկի և իր զարմիկին համար: Աւելի աղէկ նաև տիար Մէնկի համար, քանի որ հարիւր պամպուկ հարուած պիտի ընդունի եթէ մարդասպանը չի յանձնէ քոնկ իշխանին.

Իշխանն այս բառերը արտասանած էր այնպիսի հեքնական շեշտով մը որ աղնիւ դատաւորը բարկունքէն կապուեցած էր.

Յաջողեցաւ սակայն ինքզինքը զսպել, բայց միտքը գնելով վրէժ լուծել կրած ստորնացումին համար, եթէ այդ յանգուգն մարդը դատարան երևնար,

—Արդ, այդ Չուն ծանշնալու ես, շարունակեց ֆո—Հոր.

—Ոչ, մինակ խօսքը լսած եմ.

—Մտիկ ըրէ. բացէ ի բաց խօսինք. քեզի վճարեց այն գումարը զոր գողերը կուտան քեզի՝ պաշտպանութեանդ եւ ոլատսպարանի մը փոխարէն.

—Հաւատացէք որ ոչ.

—Շատ աղէկ. Չուն քանդոնի մէջ էր այսօր, և որովհետեւ գողել տուի բաղաբին գունները և բաշել տուի նաւահանգստին շղթաները, չէ կրցած խօսք տալ: Եթէ գործակալներս այս գիշեր չձերբակալեն զայն բաղաբին կամ արուարձաններուն մէջ, պատճառն այն է որ բոլորիցս մէկ տեղը ապաստանած է. թերևս հոս իսկ:

—Կերդնում որ հոս չէ.

—Ի՛նչ բանի վրայ կերդնաւ.

—Հօրս գերեզմանին վրայ.

—Ֆո—Հոր չպնդեց. անանկ երդում մըն է այս զոր ամենէն գձուձ Ձինացին չընեն՝ եթէ ըսածը ճշմարտութիւն չէ.

Գէթ ստոյգ էր որ մուրացկաններուն իշխանը չէր խաբեր զինքը այս մասին.

—Ըսէ տեսնենք, շարունակեց, կուզե՞ս ինծի ծառայել. երկար ատենէ ի վեր բոլոր մարդոցդ համար արտօնութիւն կը խնդրես ինչ որ մուրան ֆա—թիի պարտէզներուն դուռը. պիտի շնորհեմ այդ արտօնութիւնը եթէ օգնես ինձ մարդասպանը գտնելու.

Սանկ չկրցաւ զսպել ուրախութեան շարժում մը. Այդ արտօնութիւն իրեն ու հպատակներուն համար աղբիւր մը պիտի ըլլայ ահագին շահերու. որովհետեւ ամբողջ մէջ ֆա—թիի պարտէզները քանդոնի բարձր դասուն սիրելի ճեմելովայրերն են.

—Շատ աղէկ, պատասխանեց. սակարկութիւնն եղած է. բայց կիմացնեմ ձեզ որ շատ քիչ բան գիտեմ.

—Հոգ չէ.

—Ահաւասիկ ձեր ըսած մարդուն վրայ իմ գիտցածներս. Նախ Չուն ոչ բաղաբը կը բնակի ոչ արուարձանները. Ոճրէն մէկ ամիս ետքը տեսնուած է հոն: Լէնկի ամարանոցէն քողցած գոհարներուն մէկ մասը ծախելու եկած էր. Այն ատենէն ի վեր անկանոն ժամանակներու մէջ երեք չորս անգամ տեսնուած է.

—Ո՛ւր.

—Ծովահէններու նաւերու մէջ. Ամեն անգամ երևնալուն, ահագին գումարներով խաղացած է որք անծանօթ աղբիւրէ մը առաջ կուգան. Վասն զի իր գողութեան արդիւնքը շատոնց կերած լմացած ըլլալու է.

—Երբ քանդոն գայ ո՛ւր կը բնակի.

—Չեմ գիտեր. Ծովահէնի նաւերուն ետեւ միշտ իրեն սպասող մակոյկով մը կուգայ. Սակայն խեղանդամներէս երկուքը անգամ մը անոր հանդիպեր են հաւաքիտրաւոր տան առջև. Իր նաւագները անշուշտ հոն գացած բնայած էին իրեն սպասելով.

—Աւելի բան մը չե՞ս գիտեր.

—Ոչ.

—Իսկ խոստացուած արտօնութիւնը պիտի ստանաս, եթէ չխաբեցիր զիս. Դուռ առաջնորդել տուր մեզի.

Սանկ զարկաւ այն ծննդային վրայ որ քիչ մը առաջ ծառայած էր իրեն ընկերութեան հասոյթներն համբելու. անմիջապէս երկու մարդեր վազեցին. հրաման մը տուաւ անոնցմէ մէկուն և խորապէս ողջունելով իր այ-

ցելունները ըստ թէ իրենց առաջնորդին հետեւելու են այլ ևս:

Մէնկ կրկնել շտուաւ և տապալանեցաւ:

— Դուք, ըստ մուրացիկներու իշխանը իր հպատակներէն անոր որ իր քովը կը գտնուէր, Դանիական գործակալատունը պիտի վազես: Տիւրքապետին մակոյկին մէջ ֆի-ֆօսի տեղը պիտի նստիս, որպէս զի թիքաօսները չքոնեն քեզի, և արեւը ծագելուն պէս, այսինքն շղթաները բաշտելուն պէս, մակոյկ մը պիտի վարձես Վաւրաօ երթալու համար: Հոն Թօ-Միի հովանոցի վաճառականին տունը կերթաս որ մեհանին քովն է, եւ եղբայրը տեսնել կ'ուզես, ըսելով որ ես զրկած եմ բեզի: Երբ եղբայրը կանչէ կամ քեզի անոր քով զրկէ, սա գիրը իրեն կուտաս: Հասկցար ըսածս:

— Հրամանեց պիտի գործադրուի, պատասխանեց մարդը յարգանքով և սոսորհով:

Սանկ բանի մը տող գրեց գօտիէն հանած թերթ մը թուղթի վրայ և տուաւ պատգամաւորին որ վազելով ճամբայ ելաւ:

— Հիմակ ըստ տարօրինակ իշխանը ինքնիրեն, ֆօ-Հօր և Մէնկ կրնան փնտռել Լէնկի սպանիչը, եթէ գտնեն զայն կամ եթէ անիկա բռնել տայ ինքզինքը, պատճառը ես չպիտի ըլլամ: Ամենուն ալ տուած խոսքս բռնեցի: Ես իմ հեղինակութիւնս պիտի ունենամ, առանց մէկը մատնած ըլլալու:

Այս բանի մը բառերը պէտք եղածէն աւելի կը յայտնեն ճերմակ-նունուֆարին ունեցած ազդեցութիւնը:

Կը տեսնուի թէ իր կազմակերպութեանը մէջ կամ փոփէր ոչ միայն ըմբոստները ու մուրացիկները, այլ և այն ծովահէնները որոնք «Զուրի-Եղէզի աղանդ» անուանով կը տիրէին Մարգարիտներու գետի ստորին կողմին:

— Հիմակ կը մնայ, մըմաց սանկ, հսկել տալ սա սատանայ նաւապետ Բերքինսին վրայ: Ամենէն դիւրին բանէ առէ: Իմ էն ճարպիկ մարդերէս երկուքը զըրկելով անգլիական գործակալատունը, այդ գործը կը կատարեմ:

Եւ, յետին խրոխտ ակնարկ մը նետելէ յետոյ իր իշխանական կալուածին վրայ, այդ երեկոյթէն սքանչացած իր խրճիթն ուղղուեցաւ որ ամենուն պէս ողորմելի էր:

Այս միջոցին, շնորհիւ իրենց առաջնորդին անարգել անցնելէ յետոյ այն գոիհէն ուր պահ մը առաջ կեցած էին, ֆօ-Հօր և Մէնկ իրենց պտոյտը կրնէին արուարձանին մէջ:

— Բայց այս անգամ, ոչ Սուն-Բօ և ոչ Ա-Մուս պէտք չունեցան ճամբայ ցուցնել անոնց:

(Շարունակելի)

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՔ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆգրալար վէ Հիքեայէլէր. Մալիւմաթը ֆէնիւրիէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէնիւրի Էյլէնճէլէր վէ Բէսիմի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյնէյր օլունան մէղքիւր քիթապըն պիլիւնճի ճիւտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլուտէ սաթըլմագտաարը. Ֆիյ 2 ֆրանք:

—>>><<—

ԱՂՋԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ

Վարժարանիս Զրդ տարեշրջանը կը սկսի յառաջիկայ սեպտ 1/14ին:

Կ'աւանդուին Հայ ֆրանս, եւ Պոլկ, լեզուներէն զատ կրօնք, բարոյագիտութիւն, թուաբ. աշխարհագր. պատմութիւնք, բնագիտ. առ տնին տնտեսագիտ. եւայլն:

Այս տարի անցեալ տարիներէն աւելի մասնաւոր խնամք պիտի տարուի մանկապարտէզի մասին:

Ընդունելութիւնք եւ մասնաւոր տեսակցութիւնք կը կատարուին ամէն օր ժամը 9—12:

Վառնա
Սագալը շէշմէթ 1115

Տնօրէնութիւն
Պ. Ճիւրճեան

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին:

Լուսինեան իշխան — Ֆրանսահայ Բառարան, գին 25 ֆր. ոսկեղրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինտլեան — Տեօական և գործնական Բերականութիւն Պուլկարեւէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Բնական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ոսկէս ֆր.

Թապալաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ. Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւքեաֆաթը, գօմէտի պիւր բէրաէ, 50 սնդ.

Գագանճ գօճա հախօտ էնֆիլէճի, գօմէտի պիւր բէրաէ, 50 սնդ.

Печатница „Взаимность“ — Варна.